ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

« 04 » հունիսի 2012թ. հմ. 280

Երևան, Կիևյան 16, հեռ.26-68-60
էլ. փոստ՝ lpt@edu.am

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
իրավաբան Գ.Հայրապետյանին

Հարգելի՛ պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 29.05.2012թ. հմ.172-ի 2 գրության՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության ֆինանսատնտեսագիտական սպասարկումը և բոլոր տեսակի հաշվարկները, այդ թվում՝ պարգևատրումները կատարում է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմը, քանի որ Լեզվի պետական տեսչությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է: Հետևաբար, Ձեզ հետաքրքրող հարցերով կարող եք դիմել վերոնշյալ գերատեսչությանը:

Ինչ վերաբերում է նվերներին, ապա 2011 թվականի մարտի 8-ին տեսչության աշխատակիցները հրավիրվել են ԿԳ նախարարություն, որտեղ կին աշխատակիցները հուշանվերներ են ստացել արիմիության կողմից, իսկ տարեվերջին՝ Նոր տարվա կապակցությամբ տրվել են ամանորյա մանկական ներկայացումների տոմսեր և քաղցրավենիքի տոպրակներ: Արժեքների վերաբերյալ տեղեկություն կարող է տալ ԿԳ նախարարության համապատասխան վարչությունը: Լեզվի պետական տեսչության որևէ աշխատակից այլ նվերներ 2011 թվականին չի ստացել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ս. ԵՐԻՑՅԱՆ

Կատարող՝ Մ. Հովյան,
Հեռ.՝ 26-68-94-7